ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 57-Ա « 09 » հունվարի 2026թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԵՆՔԵՐԻՑ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՂ ՍԱՐՔԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «ՊՐԻՄՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Խաչատուր Մնջիկյանի դիմումը և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ.249-Ն որոշման հավելվածով՝

1. «ՊՐԻՄՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Երևան համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով 2026 թվականի հունվար ամսվա համար տրամադրել Երևան քաղաքի Դավիթ Անհաղթի փողոցի հ.հ.4 և 8, Աբելյան փողոցի հ.7/4, Ալ.Մանուկյան փողոցի հ.15/3, Արշակունյաց պողոտայի հ.9/15, Դավթաշենի 4-րդ թաղամասի հ.32, Եզ.Կողբացու փողոցի հ.42, Եր.Քոչարի փողոցի հ.9ա, Զաքյան փողոցի հ.2, Իսահակյան փողոցի հ.18, Խանջյան փողոցի հ.13/2, Խորենացու փողոցի հ.47, Կոմիտասի պողոտայի հ.հ.22, 63, 54, 54ա և 16/1, Մոսկովյան փողոցի հ.27, Սևակի փողոցի հ.122, Պուշկինի փողոցի հ.43/3, Մաշտոցի պողոտայի հ.7, Ս.Վրացյան փողոցի հ.24, Վաղարշյան փողոցի հ.15, Վարդանանց փողոցի հ.հ.22 և 24/3, Տերյան փողոցի հ.74, Տիգրան Մեծի պողոտայի հ.հ.21, 27ա, 28 և 51, Տ.Պետրոսյան փողոցի հ.հ.20, 25/5 և 24/4, Հ.Էմինի փողոցի հ.123, Տիչինայի փողոցի հ.2/1, Քաջազնունու փողոցի հ.8, Կորյունի փողոցի հ.հ.16 և 12/1, Դրոյի փողոցի հ.4, Չարենցի փողոցի հ.6, Ազատության պողոտայի հ.20, Ադոնցի փողոցի հ.19/5, Հր.Քոչարի փողոցի հ.հ.9 և 12, Բուզանդի փողոցի հ.99 շենքի դիմաց, Մոսկովյան-Տերյան փողոցների խաչմերուկ, Ձորափի փողոցի հ.7/1, Վ.Փափազյան փողոցի հ.հ.17/2 և 24 հասցեների դիմաց թվով 50 ավտոմատ ինքնասպասարկող սարքի տեղադրման թույլտվություն:

2. Ընդունել ի գիտություն, որ ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման թույլտվության հունվար ամսվա համար սահմանված տեղական վճարը վճարված է, իսկ ընթացիկ տարվա հաջորդ ամիսների համար տեղական վճարի գումարը վճարված լինելու դեպքում՝ թույլտվությունը համարվում է երկարաձգված:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետին՝ իրականացնել հսկողություն սույն որոշման 1-ին կետում նշված «ՊՐԻՄՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործունեության ընթացքում Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 249-Ն որոշման պահանջների կատարման նկատմամբ:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ